



**Ener2i - գիտությունից դեպի նորարարություն էներգետիկական հետազոտությունների ոլորտում:**

**Արևելյան գործընկերության երկրների հետ համագործակցության խթանում՝  
էներգետիկական հետազոտությունների և նորարարության ոլորտում**

## **Հայտարարվում է ener2i նորարարական վաուչերների մրցույթ Հայաստանում**

Եվրամիության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող **ener2i** ծրագիրը ([www.ener2i.eu](http://www.ener2i.eu)) հրավիրում է Հայաստանի փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ), որոնք նորարարական նպատակներ են հետապնդում վերականգնվող էներգիայի աղբյուրների (ՎԷԱ, RES) կամ էներգետիկ արդյունավետության (ԷԱ, EE) բարելավման ոլորտներում, մասնակցել նորարարական վաուչերների մրցույթին:

Մրցույթի նպատակն է՝ նպաստել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների ոլորտում նորարարական նախագծերի իրականացմանը, տրամադրելով ուղղակի ֆինանսական աջակցություն նախագծերի նախաձեռնման վաղ փուլում:

ՓՄՁ-ները, այդ թվում՝ սկսնակ (“start-up”) և առանձնացվող դուստր (“spin-offs”) ձեռնարկությունները հնարավորություն կստանան ձեռք բերել իրենց նախագծերի իրականացման համար անհրաժեշտ գիտահետազոտական ծառայություններ անմիջապես այդ ծառայությունների և գիտելիքների մատակարարներից՝ գիտական կազմակերպություններից: Դա թույլ կտա հաստատել կամ ամրապնդել գիտահետազոտական կազմակերպությունների հետ համագործակցությունը:

**ener2i Innovation Voucher** մրցույթին մասնակցելու համար դիմող ընկերությունը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին .

- Ծրագրի դիմորդները պետք է համապատասխանեն փոքր և միջին ձեռնարկությունների ԵՄ սահմանմանը<sup>1</sup> (declaration 2003/361/EC):
- ՓՄՁ-ն **ener2i Innovation Voucher** մրցույթի դիմումը ներկայացնելու վերջնաժամկետի դրությամբ պետք է պաշտոնապես գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:
- Չեն ֆինանսավորելու գործողություններ, որոնք արդեն ստացել են աջակցություն ԵՄ որևէ այլ ծրագրերից:
- Շահառուն պենք է լինի ՓՄՁ, որը համագործակցում է գիտահետազոտական կազմակերպության հետ:
- Նախագծում նախատեսված գործողությունները (նորարարական վաուչերի միջոցների օգտագործումը) պետք է իրականացվեն պայմանագրի ստորագրման պահից 6 ամսվա ընթացքում:

Նորարարական վաուչերների մրցույթին մասնակցած և առավելագույն միավորներ ստացած վեց նախագծեր կստանան դրամաշնորհ՝ յուրաքանչյուրը 4,000 Եվրո գումարի չափով: Ստացված միջոցները պետք է ուղղվեն գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկված աշխատակիցների վարձատրման և/կամ միջազգային մակարդակով գիտելիքների փոխանցման նպատակով գործուղման ծախսերի հատուցման համար:

Հայտերի գնահատման և ընտրության չափանիշների մասին, ինչպես նաև այլ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ փաստաթղթում. [Terms of Reference - ener2i Innovation Voucher Competition Armenia \(pdf\)](#).

Մրցույթ հրատարակվել է՝ 2015թ. մայիսի 15-ին:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2015թ. հուլիսի 27-ը, ժամը 17:00 (Երևանի ժամանակով, հայտերի առցանց ներկայացման միջոցով):

Հայաստանում կոնտակտային անձեր.

Տիգրան Արզումանյան, [tarznip@sci.am](mailto:tarznip@sci.am), հեռ. +374 10 525432:

<sup>1</sup> ՓՄՁ-ների սահմանում. միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ են համարվում մինչև 250 աշխատող ունեցող ձեռնարկությունները, որոնց շրջանառությունը օրացուցային տարում չի գերազանցում 50 մլն եվրոն, և/կամ տարեկան ընդհանուր հաշվեկշիռը չի գերազանցում 43 մլն եվրոն: European Commission - EN NB-60-04-773-EN-C 92-894-7909-4 – „The new SME definition – User guide and model declaration”. [http://ec.europa.eu/enterprise/policies/sme/facts-figures-analysis/sme-definition/index\\_en.htm](http://ec.europa.eu/enterprise/policies/sme/facts-figures-analysis/sme-definition/index_en.htm)

Միքաել Արուվյան, [tta@netsys.am](mailto:tta@netsys.am), հեռ. +374 95 404665.

Հայտերի առցանց ներկայացման կարգը.

1. Մրցութային հանձնաժողովը կքննարկի միայն առցանց էլեկտրոնային համակարգով ներկայացված դիմումները. <http://survey19.zsi.at/index.php/535283/lang-en>:
2. Հայտը ներկայացնելու համար անհրաժեշտ է գրանցվել կայք-էջում (<http://survey19.zsi.at/index.php/535283/lang-en>): Գրանցվելուց հետո առցանց դիմումի անհատական ձևը կուղարկվի Ձեր էլ.փոստին:
3. Հղումը ստանալուց հետո դուք կարող եք սկսել լրացնել դիմումի Ա մասը:
4. Դիմումի Բ մասը նախապես լրացվում է doc-ֆորմատով (ոչ docx-ֆորմատով, բեռնել այստեղ - [download here - Part B template \(doc\)](#)) և բեռնվում է համակարգ Ա մասը լրացնելուց հետո: Առցանց դիմումի էլ.համակարգը կուղեկցի ձեզ բոլոր քայլերում: Որևէ հարց առաջանալու դեպքում խնդրում ենք կապվել տեխնիկական աջակցության հետևյալ հասցեով. [office@ener2i.eu](mailto:office@ener2i.eu).
5. Բ մասը բեռնելուց հետո (doc-ֆորմատով), սեղմեք “**submit**” («Ուղարկել»):
6. Դիմումի ներկայացման գործընթացի ավարտից հետո դուք կստանաք հաստատող նամակ Ձեր էլ.փոստին:



Այս նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական միության հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացման 7-րդ շրջանակային ծրագրի շրջանակներում համաձայն թիվ 609532 դրամաշնորհի համաձայնագրի.